Ավետիք Իսահակյան

Ժեռ, սև քարը սրտիս վրա

Ժեռ, սև քարը սրտիս վրա
Գերեզմանիս մութ խորքում,
Դարդի սարը սրտիս վրա՝
Քնել էի հողի քուն:

Գարունն եկավ, Շուշանս եկավ
Տատրակի հետ ձայն տվավ,
Տատրակս եկավ, քարիս նստավ,
Ինձի անուշ ձայն տվավ:

«Ե՛լ, ազիզ ջան, Արփաչայի
Ուռիները ծաղկել են.
Ուռիներեն ճյուղք եմ բերել՝
Քեզի իրենց կանչում են»:

- «Ե՛լ, ազիզ ջան, գարունն եկավ
Ալ – բալ հազան սար ու ձոր.
Քեզի շաղաղ վարդ եմ բերել,
Երթանք, ման գանք սար ու ձոր;

«Ե՛լ, ազիզ ջան, հովն է բուրում,
Գառն ու ոչխար սարն ելան.
Ալագյազը սիրտն է բացել.
Ալագյազին տես երթանք» …

Ա՜խ, ժեռ – քարը սրտիս վրա,
Խոր, հին վերքը սրտիս մեջ.
Ու վեր ելնել ես չըկրցա, -
Սերն էր մեռել սրտիս մեջ:

1901
Ցյուրիխ